Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՄԻԼԱՆԻ Ս. ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՍ, ԾԽԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՍ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՍ ՍՈՒՐԲ ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՈՐ Ի ՄԻԼԱՆ, ԻՏԱԼԻԱ

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Միլանի բարեպաշտ հայորդիներին, Սուրբ Քառասուն Մանկունք եկեղեցու հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Առէն վրդ. Շահենեանին, Ծխական խորհրդի պատուարժան անդամներին եւ շնորհաւորում եկեղեցու օծման յիսնամեայ յոբելեանի առիթով:

Սիրելի հաւատաւոր զաւակներ Մեր,

Կէս դար առաջ, երբ կառուցուեց ու օծուեց Սուրբ Քառասուն Մանկունք Եկեղեցին, նոր շունչ ստացաւ հայորդեաց ազգային եւ հոգեւոր կեանքը Իտալիոյ Միլան քաղաքում: Ապաւէն ունենալով հաւատն առ Աստուած՝ մեր ժողովրդի զաւակները եկեղեցու հովանու ներքոյ կերտուող հայ համայնքի պատմութիւնը զարդարեցին եկեղեցաշէն ու ազգաշէն բարի գործերով՝ սերունդներին փոխանցելով հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան իրենց ոգին:

Հայրապետիս հոգին ուրախ է, որ այսօր էլ աննուազ է ազգային եւ հոգեւոր կեանքը զօրեղ պահելու միլանաբնակ Մեր զաւակների նախանձախնդրութիւնը: Յոբելեանական այս ուրախ առիթով Հայրական Մեր բարձր գնահատանքն են յղում եկեղեցու պայծառութեանը աւանդ բերող բոլոր հայորդիներիդ եւ Լուսաւորիչ Ս. Հայրապետի Գահից յորդոր ուղղում ձեզ, որ հաստատուն մնաք հաւատքի մէջ եւ անխախտ՝ Հայրենի մեր Երկրի ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ ձեր սիրոյ մէջ, մէկտեղուած ջանքերով համայնքային ձեր կեանքը դարձնէք յարաճուն ընթացք դէպի շինութիւն ու պայծառութիւն: Հայապահպանութեան սրբազան առաքելութեանը աւանդ բերելու նախանձախնդրութեամբ հոգ տարեք երիտասարդ սերունդի հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանը, որպէսզի նրանք աճեն ու հասակ առնեն զօրեղ հաւատով, ազգային ինքնութեան գիտակցութեամբ, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

հանդէպ անխախտ հաւատարմութեամբ՝ մշտավառ պահելու հաւատոյ ջահը մեր հայրերի:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենազօր Աջի հովանու ներքոյ պահպանի Սուրբ Քառասուն Մանկունք եկեղեցին եւ երկնատուր Իր շնորհներով առատապէս օրհնի Միլանի սիրեցեալ Մեր բոլոր զաւակներին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 28-ն Ապրիլի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 840